## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 112753629

Պետության կարիքների համար վարձակալած գծի ծառայությունների մատուցման պետական գնման

ք. Երևան «01» «07» 2016թ.

«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» («ԱրմենՏել») փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Օպերատոր», որը գործում է համաձայն թիվ 60 լիցենզիայի և ընկերության կանոնադրության, ի դեմս ***Լիազորված անձ Գ.Զատիկյանի*** մի կողմից և ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար ***Մ.Բաղդասարյանի*** մյուս կողմից, այսուհետ՝ «Բաժանորդ», որը գործում է համաձայն իր կանոնադրության, այսուհետ երկուսը միասին՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «Օպերատորը» «Բաժանորդին» տրամադրում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված վարձակալած գծի ծառայությունը, որն իր մեջ ներառում է՝

- Հանրային ամրակցված հեռախոսային ցանցին միանալու հնարավորությամբ 2048 կբիթ/վրկ թողունակությամբ E1 կապուղու տեղադրման ծառայություն (այսուհետ՝ E1 կապուղու տեղադրման ծառայություն) և Բաժանորդային և տեղական զանգերի (ներառյալ՝ ինտերնետ հասանելիության ծառայության համարDial-Up) ծառայություն (այսուհետ՝ E1 կապուղու բաժանորդային ծառայություն)

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՓՈԽՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրի համաձայն «Բաժանորդի» կողմից «Օպերատորին» վճարման ենթակա գումարը/ պայմանագրի գինը կազմված է.

- E1 տեղադրման ծառայության համար միանվագ վճարից՝ ____________________ - ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), *որը* ենթակա է վճարման սույն պայմանագրի ստորագրման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ «Օպերատորի» կողմից ներկայացված հաշվի հիման վրա, *և*
- Փաստացի մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների վճարից, որը հաշվարկվում ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ում ամրագրված գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

2.2 «Օպերատորն» էլեկտրոնային փոստով «Բաժանորդին» է ներկայացնում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ով և 3-ով ամրագրված օրինակելի ձևերի համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ՝ Հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրվանից սկսած, սակայն ոչ ուշ, քան 25-ը:
*Տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա գումարը «Բաժանորդը» տրամադրում է որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:
Եթե «Օպերատորը» «Բաժանորդին» մատուցում է նաև այլ պայմանագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա «Օպերատորը» կարող է Բաժանորդին ներկայացնել բոլոր մատուցված ծառայությունների գծով մեկ միասնական հանձնման-ընդունման արձանագրություն, ինչպես նաև մեկ միասնական հաշիվ՝ կից ըստ պայմանագրերի առանձնացված հաշիվներով:

2.3 Վճարումները «Բաժանորդի» կողմից կատարվում են հարկային հաշիվը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ. բացառությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա գումարների, որը վճարվում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին:

2.4 «Բաժանորդը» տեղադրման միանվագ վճարն ու մատուցված ծառայության արժեքը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները «Օպերատորի» հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով: Վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները «Օպերատորի» հաշվեհամարին մուտքագրվելու պահից:

2.5 Մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է «Օպերատորի» բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված

## ДОГОВОР № 112753629

Государственной закупку предоставления услуги арендованной линии для государственных нужд

г.Ереван «01» «07» 2016г.

Закрытое акционерное общество «АрменТел», именуемое в дальнейшем «Оператор», действующее в соответствии с лицензией N60 и Устава компании, в лице ***Доверенного лица Г.Затикяна***, с одной стороны, и Министерство регионального управления и развития РА в лице ВриО Руководителя аппарата М.Багдасаряна, именуемый в дальнейшем «Абонент», действующий на основании своего Устава, при совместном упоминании именуемые «Стороны» заключили настоящий договор о следующем:

### 1. ПРЕДМЕТ ДОГОВОРА

1.1 «Оператор» предоставляет «Абоненту» услугу арендованной линии, указанную в Приложении N1, являющуюся неотъемлемой частью настоящего договора, которая включает в себя:

- услугу установки канала связи E1 с возможностью соединения к общественной фиксированной телефонной сети (далее услуга установки канала связи E1) и абонентскую услугу канала связи E1 с пропускной способностью 2048кбт/с с возможностью соединения к общественной фиксированной телефонной сети (далее абонентская услуга канала связи E1).

### 2. ЦЕНА ДОГОВОРА И ПОРЯДОК РАСЧЕТА

2.1 Сумма (цена договора), подлежащая оплате «Оператору» «Абонентом» согласно настоящему договора, состоит из:

- Единовременная плата за услугу установления канала связи E1 в размере ____________________ драм РА (включая НДС), которая подлежит оплате в течение 5 рабочих дней со дня подписания настоящего договора на основании счета, представленного Оператором, и
- Плата за фактически предоставленные услуги электорнного сообщения, которая рассчитывается ежемесячно согласно ценам (указанные цены включают НДС), указанным в Приложении 1, являющимся неотъемлемой частью настоящего Договора.

2.2 «Оператор» по электорнной почте предоставляет «Абоненту» Протокол прием-сдачи и счет по типовым формам, закрепленным соответственно в Приложениях 2 и 3 настоящего Договора начиная с 10 числа, однако не позднее 25 числа, месяца, следующего за отчетным.
*Сумму за декабрь данного года «Абонент» вправе заплатить в качестве аванса. Погашения аванса происходит путем совершения снижений (удержаний)с оплат, совершаемых на основании Протоколов. Каждый раз размер снижаемой (погашаемого аванса) суммы определяется исходя из соотношения оплачиваемой суммы к общей стоимости договора.
Если «Оператор» оказывает «Абоненту» услуги электронного сообщения, определенные иными договорами, то «Оператор» вправе представлять «Абонентам» единый Протокол прием-сдачи по всем оказанным ему услугам, а также один единый счет с приложением отдельных счетов по каждому договору.

2.3 «Абонент» оплачивает счета в течение одной недели после получения налогового счета, но не позднее последнего дня включительно месяца, следующего за расчетным месяцем, за исключением сумм, подлежащих оплате за услуги, оказанные в декабре, которые выплачиваются в течение декабря текущего года.

2.4 Единовременную плату за услугу установления канала и стоимость оказанных услуг «Абонент» платит безналично путем перечисления денежных средств на счет «Оператора». Оплата считается произведенной с момента оприходования денежных средств на счет «Оператора».

2.5 Объем оказанных услуг определяется на по данным билинговой системы. Указанные данные являются неоспоримым доказатель-

գրանցումները/ տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 «Օպերատորը» պարտավոր է.

3.1.1 Սույն պայմանագրի ստորագրելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում մատուցել E1 կապուղու տեղադրման ծառայությունը:

3.1.2 E1 կապուղու տեղադրման ծառայությունը մատուցելուց հետո կազմել և ստորագրել ծառայությունների հանձնման-ընդունման ակտ:

3.1.3 Սույն պայմանագրի 3.1.2. կետով նախատեսված հանձնման-ընդունման ակտ ստորագրելուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում սկսել E1 կապուղու բաժանորդային ծառայության մատուցումը:

3.1.4 Ապահովել իր տարածքում E1 կապուղու անխափան աշխատանքը:

3.1.5 Ծանուցել «Բաժանորդին» E1 կապուղու բաժանորդային ծառայության մատուցման ժամանակավոր կասեցման մասին «Օպերատորի» պլանային աշխատանքներ կատարելու դեպքում, այդպիսի աշխատանքներ սկսելու օրվանից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ, ուղղելով ծանուցումը պատասխանատու անձին E-mail-ով, նշված 3.3.16 կետում:

3.1.6 Առանց «Բաժանորդին» նախապես ծանուցելու, «Օպերատորի» սարքավորման հետ կապված վթարի, վնասի և այլ խնդիրների առաջացման դեպքում ժամանակավոր կասեցնել Ծառայության մատուցումը:

3.1.7 Սույն պայմանագրի 3.1.6 կետով սահմանված դեպքերի առաջանալու դեպքում, «Օպերատորը» պարտավոր է E1 կապուղու բաժանորդային ծառայության կասեցման պահից երկու ժամվա ընթացքում, սույն պայմանագրի 3.3.16 կետով նշված անձին ուղարկել Ծառայության մատուցման ժամանակավոր կասեցման մասին տեղեկություն:

3.1.8 Սույն պայմանագրի 2.2 կետով սահմանված ժամկետներում «Բաժանորդին» ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրություն և հարկային հաշիվ:

3.1.9 Սույն պայմանագրում նշված ծառայությունների գնացուցակը/ սակագները փոփոխել սույն պայմանագրով նախատեսված կարգով:

3.1.10 Կապուղու խափանման և/կամ անսարքությունների վերաբերյալ ծանուցում ստանալու դեպքում վերացնել դրանք ՀՀ ՀԾԿՀ N 272-Ն առ 20.05.2008 թ.որոշմամբ հաստատված «Հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու» կանոններում սահմանված ժամկետներում:

3.1.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել «Բաժանորդին»:

3.2 «Օպերատորն» իրավունք ունի.

3.2.1 Սույն պայմանագրի 2.1 և 2.3. կետերով սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ կասեցնել E1 կապուղու բաժանորդային ծառայության մատուցումը և անջատել «Բաժանորդին» տրամադրված կապի բոլոր մի-ջոցները: Այս դեպքում, «Օպերատորը» պարտավոր է «Բաժանորդին» գրավոր ծանուցել կասեցման մասին կասեցումից առնվազն տաս օր առաջ:

3.2.2 «Բաժանորդի» կողմից սույն պայմանագրով 3.1.2. կետով սահմանված ընդունման-հանձնման ակտն այն ներկայացնելուց հետո երկու օրվա ընթացքում չստորագրելու դեպքում՝ չսկսել E1 կապուղու բաժանորդային ծառայության մատուցումը և անջատել «Բաժանորդին» տրամադրված կապի բոլոր միջոցները:

3.2.3 Կասեցնել E1 կապուղու բաժանորդային ծառայության մատուցումը եթե «Բաժանորդը» խախտել է սույն պայմանագրի 3.3.1-3.3.14 կետերից որևէ մեկը:

3.2.4 Միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը. եթե E1 կապուղու բաժանորդային ծառայության մատուցման սահմանափակման հիմքերը շարունակվում են սահմանափակման կիրառումից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

3.2.5 «Բաժանորդից» պահանջել վճարելու իրեն վճարման

ством оказания Услуг и объемов последнего.

## 3. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН

3.1 «Оператор» обязан:

3.1.1 В течении трех рабочих дней с момента подписания настоящего договора предоставить услугу установки канала связи E1.

3.1.2 После предоставления услуги установки канала связи E1, составить и подписать акт сдачи-приема услуг.

3.1.3 В течении одного рабочего дня после подписания акта сдачи-приема, предусмотренного в пункте 3.1.2 настоящего Договора начать предоставление абонентской услуги канала связи E1.

3.1.4 Обеспечить у себя на территории бесперебойную работу средств канала связи E1

3.1.5 Уведомить «Абонента» о приостановлении абонентской услуги канала связи E1 в случае осуществления плановых работ, как минимум за 2 (два) рабочих дня до осуществления таких работ, направив оповещение на E-mail ответственного лица «Абонента», указанный в п.3.3.16.

3.1.6 Без письменного уведомления «Абонента», временно приостановить предоставление абонентской услуги канала связи E1 в случае аварий, повреждений оборудования «Оператора».

3.1.7 В течении двух часов с момента приостановления предоставления абонентской услуги канала связи E1, в случае наступления случаев, предусмотренных в пункте 3.1.6. настоящего договора, сообщить представителю «Абонента», указанного в пункте 3.3.16 настоящего Договора о приостановлении услуги.

3.1.8 Представить «Абоненту» протокол прием-сдачи и налоговый счет в сроки, установленные пунктом 2.2 настоящего договора.

3.1.9 Оповестить «Абонента» об изменении цен на услуги предоставляемые настоящим договором, в установленном порядке.

3.1.10 Получив заявку о повреждении и/или неполадках канала устранить их в сроки установленные «Правилами предоставления и пользования услуг телефонной связи», утвержденными решением КРОУ РА за номером 272 -N от 20.05.2008 года.

3.1.11 В случае начала процесса ликвидации или банкротства в процессе обеспечения исполнения настоящего договора предварительно письменно уведомить «Абонента».

3.2 «Оператор» имеет право:

3.2.1 Приостановить предоставление абонентской услуги канала связи E1 и отключить все переданное «Абоненту» Оборудование, за не уплату в сроки установленные пунктами 2.1 и 234. настоящего договора. В этом случае, «Оператор» обязан письменно известить «Абонента» как минимум за десять дней до такого приостановления.

3.2.2 В случае неподписания «Абонентом» акта прием-сдачи, определенного пунктом 3.1.2. настоящего Договора, в течении двух дней с момента представления акта «Абоненту», не начинать предоставления абонентской услуги канала связи E1 и отключить все средства связи, предоставленные «Абоненту».

3.2.3 Приостановить предоставление абонентской услуги канала связи E1, если «Абонент» нарушил один из пунктов 3.3.1-3.3.14 настоящего договора.

3.2.4 Расторгнуть договор в одностороннем порядке, если основания для приостановления предоставление абонентской услуги канала связи E1 продолжается в течении шести месяцев после применения приостановления.

3.2.5 Требовать у Абонента оплатить суммы, подлежащие опла-

ենթակա գումարները, իսկ «Բաժանորդի» կողմից սույն պայմանագրի 2.1 և/կամ 2.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված տույժը:

3.3 «Բաժանորդը» պարտավոր է.

3.3.1 Մատուցված ծառայությունների համար վճարումները կատարել սույն պայմանագրի 2.1 և 2.3. կետերով սահմանված ժամկետներում և կարգով:

3.3.2 E1 կապուղու տեղադրման ծառայությունը մատուցելուց հետո կազմել և ստորագրել ծառայությունների ընդունման-հանձնման ակտ:

3.3.3 Ապահովել E1 թվային կապուղով տրամադրված յուրաքանչյուր հեռախոսահամարի բոլոր զանգերի ուղարկումը «Օպերատորի» հեռախոսակայան՝ տրաֆիկի գրանցման և հաշվարկման նպատակով:

3.3.4 Իր օգտագործման համակարգում գործող հեռա-հաղորդակցության համակարգերով չխոչընդոտել «Օպերատորի» հեռահաղորդակցության ցանցերի աշխատանքին:

3.3.5 Իր սեփական ուժերով կատարել ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ իր սարքավորումների կարգաբերումը:

3.3.6 «Օպերատորին» չներկայացնել որևէ գույքային և/կամ ոչ գույքային պահանջներ, կապված ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ իր սարքավորման կարգաբերման անհնարինության հետ:

3.3.7 Ապահովել սույն պայմանագրին անբաժանելի մաս կազմող թիվ 6 հավելվածով նշված սարքավորումների և E1 կապուղու պահպանությունը:

3.3.8 Օգտագործել E1 կապուղին և սույն պայմանագրին անբաժանելի մաս կազմող թիվ 6 հավելվածով նշված սարքավորումները միայն սույն պայմանագրով նախատեսված կարգով:

3.3.9 Առանց «Օպերատորի» գրավոր համաձայնությանը երրորդ անձանց չօտարել և/կամ օգտագործմանը չփոխանցել սույն պայմանագրին անբաժանելի մաս կազմող թիվ 6 հավելվածով նշված սարքավորումները:

3.3.10 Երրորդ անձանց չփոխանցել սույն պայմանագրով նախատեսված իր իրավունքներն և պա-րտականությունները:

3.3.11 Սույն պայմանագրին անբաժանելի մաս կազմող թիվ 6 Հավելվածով նշված սարքավորումներին իր մեղքով հասցրած վնասների համար «Օպերատորին» փոխհատուցել իրական վնասները:

3.3.12 Բացառել անօրինական միացումներն իրեն տրամադրված E1 կապուղուն:

3.3.13 Առանց կարգավորող մարմնի կողմից տրված համապատասխան լիցենզիայի և հեռախոսահամար զբաղեցնելու թույլտվության չօգտագործել տրամադրված կապի միջոցները շահույթ ստանալու նպատակով:

3.3.14 Հանձնման-ընդունման արձանագրությունը և Հաշիվը ստանալուց հետո, 3 օրվա ընթացքում հաստատել այն կամ, անհամաձայնության դեպքում՝ ներկայացնել գրավոր առարկություններ:

3.3.15 E1 կապուղու բաժանորդային ծառայության կամ «Օպերատորի» նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքերում 2 աշխատանքային օրվա ընթացքում ետ վերադարձնել սույն պայմանագրին անբաժանելի մաս կազ-մող թիվ 6 հավելվածով նշված սարքավորումները:

3.3.16 Նշանակել պատասխանատու անձ՝ սույն պայմանագրի շրջանակում տեխնիկական խնդիրները լուծելու համար:

ԱԱՀ՝ Ազատյան Ա.
Պաշտոն՝ *Աշխատակազմի ղեկավարի տեղակալ*
Հեռախոս՝ 094 404009
E-mail a.azatyan@mta.gov.am

3.4 «Բաժանորդն» իրավունք ունի.

3.4.1 E1 կապուղու բաժանորդային ծառայության խափանման դեպքում դիմել «Օպերատորին», զանգահարելով 100 հեռախոսահամարով և տրամադրել հետևյալ տեղեկություններ.

ա) բաժանորդի անունը (Անվանումը)
բ) անսարք հեռախոսի (կապուղու) համարը
գ) խափանման բնույթի մասին սպառիչ տեղե-

те, а в случае нарушения сроков указанных в п. 2.1. и/или п. 2.3 настоящего договора требовать оплаты пени согласно п. 4.2 настоящего договора.

3.3 «Абонент» обязан:

3.3.1 Произвести оплату за предоставление Услуги в порядке и в сроки, установленные пунктами 2.1. и 2.3. настоящего договора.

3.3.2 После предоставления услуги установки канала связи E1. составить и подписать акт прием-сдачи услуги.

3.3.3 Обеспечить посылку всех звонков с каждого телефонного номера канала E1 на телефонную станцию «Оператора» с целью регистрации и учета трафиков.

3.3.4 Не препятствовать работе телекоммуникационных сетей «Оператора» телекоммуникационными системами, действующими в собственной сети.

3.3.5 Самостоятельно осуществлять настройку своего оборудования, необходимого для должного предоставления услуг.

3.3.6 Не предъявлять каких-либо имущественных и/или неимущественных претензий к Оператору, связанных с невозможностью настройки своего оборудования, необходимого для должного предоставления услуг.

3.3.7 Обеспечить сохранность Оборудования «Оператора» указанного в Приложении №6, являющего неотъемлемой частью настоящего Договора.

3.3.8 Использовать канал связи E1 и Оборудование «Оператора», указанного в Приложении №6, являющего неотъемлемой частью настоящего Договора только в соответствии с положениями настоящего Договора.

3.3.9 Без письменного разрешения« «Оператора», не отчуждать и/или не передавать третьим лицам Оборудование «Оператора», указанного в Приложении №6 являющегося неотъемлемой частью настоящего Договора.

3.3.10 Не передавать свои права и обязанности, предусмотренные настоящим договором третьим лицам.

3.3.11 Возместить «Оператору» в размере реального ущерба за повреждение, порчу, утрату, не возврата Оборудования «Оператора», указанного в Приложении №6, являющегося неотъемлемой частью настоящего Договора.

3.3.12 Исключить незаконные подключения к предоставленному каналу связи E1.

3.3.13 Не использовать предоставленные средства связи в целях получения дохода без наличия соответствующей лицензии и разрешения на занятие телефонных номеров, полученных от Регулятора.

3.3.14 После получения протокола прием-сдачи и счета заверить его, а в случае несогласия представить письменное возражение в 3-х дневный срок.

3.3.15 В случае досрочного расторжения или прекращения настоящего договора, в течении 2 рабочих дней с момента расторжения или прекращения договора вернуть Оборудование «Оператора», указанного в Приложении № 6 являющегося неотъемлемой частью настоящего Договора.

3.3.16 Назначить ответственное лицо для решения технических вопросов в рамках настоящего договора:

ФИО: Азатян Артур
Должность: Зам.руководителя аппарата
Тел: 094 404009
E-mail: a.azatyan@mta.gov.am

3.4 «Абонент» имеет право:

3.4.1 В случае сбоев в предоставлении абонентской услуги канала связи E1, обратиться к «Оператору» по номеру 100 и сообщить следующие данные:

а) Имя (наименование) «Абонента»
б) номер не работающего телефона (канала)
в) полную информацию о характере сбоя

տեղեկատվությունը չտրամադրել որևէ երրորդ կողմի՝ նախապես չստանալով մյուս Կողմի գրավոր թույլտվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո սույն կետը պահպանում է իր ուժը և գործում է երեք տարի պայմանագրի դադարեցման կամ լուծման օրվանից սկսած:

6.2 Յուրաքանչյուր Կողմ (եթե կիրառելի է) մշակում է մյուս Կողմի աշխատակիցների անձնական տվյալները ծրագրային-ապարատային միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց օգտագործման: Անձնական տվյալների մշակում ցանկացած գործողություն անձնական տվյալների հետ, ներառյալ մշակումը, օգտագործումը, ինչպես նաև երրորդ անձանց (ներառյալ՝ այլ երկրներ) փոխանցումը:
Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է իր աշխատողների համաձայնությունը իրենց անձնական տվյալների մշակմանը:
Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է անձնական տվյալների մշակման բոլոր փուլերում ապահովել անձնական տվյլաների գաղտնիությունն ու պաշտպանությունը ՀՀ օրենսդրության համաձայն:
Սույն պայմանագիրը կնքելով «Բաժանորդը» հավաստում է, որ «Օպերատորի» կողմից ծանուցված է «Բաժանորդի» աշխատակիցների անձնական տվյալները մշակելու «Օպերատորի» մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ և ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից, գործում է 01.04.2016թ.-ից Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ՝ մեկ տարի ժամկետով: Եթե պայմանագրի գործողության ժամկետից առնվազն 10 օր առաջ կողմերից մեկը մյուս կողմին գրավոր չի հայտնում պայմանագրի լուծման իր մտադրության մասին, ապա պայմանագրի գործողությունը համարվում է երկարացված ևս մեկ տարով՝ պայմանագրի լուծման համար նախատեսված ժամկետից սկսած:

7.2 Սույն պայմանագրի փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մաս, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի:
Եթե սույն պայմանագրում և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/սակագներում առկա է սակագին, որը հաստատված է համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից և ՀՀ օրենսդրության համաձայն կարող է փոփոխվել այդ մարմնի կողմից, ապա սույն պայմանագիրը դրա անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և սույն պայմանագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված՝ համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի և/կամ պետական լիազորություններով օժտված մարմնի կողմից նոր սակագին հաստատելու և «Օպերատորի» կողմից այն ներդնելու օրվանից:
Եթե «Օպերատորը» պետական մարմնի որոշման համաձայն ի կատարումն այդ որոշման պարտադրված իրականացնի փոփոխություն սույն պայմանագրում և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ում ամրագրված գնացուցակում/ սակագներում, ապա սույն պայմանագիրը դրա անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում և սույն պայմանագրում ամրագրված տվյալ սակագնի մասով համարվում է փոփոխված՝ «Օպերատորի» կողմից ի կատարումն պետական մարմնի որոշման նոր սակագին հաստատելու և «Օպերատորի» կողմից այն ներդնելու օրվանից:

7.3 Կողմերից յուրաքանչյուրը կարող է վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին գրավոր մեկ ամիս առաջ հայտնելով:

7.4 Եթե տվյալ տարում «Բաժանորդի» համար բյուջեով նախատեսվել են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա հաջորդող տարիներին Ծառայությունների մատուցումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

мацию какой либо третьей стороне без предварительного письменного разрешения другой Стороны, за исключением случаев, предусмотренных законодательством РА. Настоящий пункт остается в силе после окончания срока действия настоящего Договора и действует в течение трех лет с даты окончания или расторжения Договора.

6.2 Любая Сторона (если применимо) обрабатывает личные данные работников другой Стороны с помощью программно-аппаратных средств или без использования таковых. Обработка личных дан ных – любое действие с личными данными, включая обработку, использование, а также передачу третьим лицам (в том числе и в другие страны). Каждая Сторона гарантирует согласие своих работников на обработку личных данных.
Каждая Сторона обязуется на всех этапах обработки личных данных обеспечить исполнение конфиденциальность и защиту личных данных в соответствии с законодательством РА.
Заключая настоящий договор, «Абонент» подтверждает, что извещен «Оператором» о намерении «Оператора» обрабатывать личные данные работников «Абонента», об основаниях обработки и целях, а также об иных сведениях относительно уведомления, предусмотренных Законом РА «О Личных данных».

## 7. СРОК ДЕЙСТВИЯ ДОГОВОРА

7.1 Настоящий договор вступает в силу после двустороннего подписания, действует в отношение обязательств Сторон фактически возникших с 01.04.2016г. в течение 1 (одного) года. Если за 10 дней до истечения срока действия договора ни одна из сторон письменно не заявила о расторжении, то действие договора считается продленным еще на 1(один) год, считая с момента срока предусмотренного для расторжения договора.

7.2 Изменения и дополнения к договору могут быть внесены только при взаимном согласии сторон путем подписания соглашения, которые будет является неотъемлемой частью настоящего Договора, за исключением случаев, указанных в настоящем пункте.
Если в договоре или в списке цен тарифов, закрепленных в Приложении 1 настоящего договора, имеется тариф, который утвержден и согласно действующему законодательству РА может быть изменен уполномоченным государственным органом и/или органом, наделенным государственными полномочиями, то настоящий договор в части данного тарифа, закрепленного в настоящем договор или Приложении 1 настоящего Договора считается измененным с даты утверждения нового тарифа уполномоченным государственным органом и/или органом, наделенным государственными полномочиями и внедрение нового тарифа "Оператором".
Если «Оператор» будет вынужден во исполнения решения государственного органа внести изменения в тарифы, закрепленные в настоящем Договоре или Приложении 1 настоящего договора, то настоящий договор в части данного тарифа, закрепленного в настоящем договор или Приложении 1 настоящего Договора считается измененным с даты утверждения и внедрения нового тарифа «Оператором» во исполнения решения государственного органа.

7.3 Каждая из сторон может проявить инициативу расторгнуть настоящий договор, за месяц вперед, письменно оповестив об этом другую сторону.

7.4 Если в данном году для «Абонента» по бюджету будут предусмотрено меньше средств, чем цена договора, остальная часть услуг будет оказана в случае, если средства будут предусмотрены в последующие годы путем заключения дополнительных соглашений. Если средства не будут предусмотрены в год, последующий за данным годом, по данной части договор будет растрогнут.

7.5 Սույն պայմանագրի լուծումը կամ դադարումը կամ կասեցումը հիմք չէ Կողմերի ֆինանսական պարտավորությունների համապատասխանաբար դադարեցման կամ կասեցման: Ֆինանսական պարտավորությունների մասով պայմանագրի գործում է մինչև դրանց ամբողջ ծավալով կատարումը:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 2-ական օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հայերեն և ռուսերեն տեքստերի միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տեքստի օրինակին:

**նախատեսվում է ՀՀ կառավարության 18/01/2002թ. թիվ 48-Ն որոշման 66-րդ կետով սահմանված պահանջի կատարման նպատակով:*

7.5 Расторжение или прекращение или приостановление настоящего договора не является основанием для прекращения или приостановления финансовых обязательств Сторон. По части финансовых обязательств договор действует до их исполнения в полном объеме.

7.6 Настоящий договор составлен на армянском и русском языках, в 2-х экземплярах, имеющих равную юридическую силу. В случае разночтений предпочтение дается армянскому варианту.

**предусматривается для исполнения требования, установленного п. 66 решения 48-Н Правительства РА 18.01.2002г.*

## 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

| **«Օպերատոր»** | **«Оператор»** |
|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ЗАО «АрменТел» |
| 0014, ք. Երևան, Ահարոնյան 2<br>«Հայ Էկոնոմ Բանկ» ԲԲԸ | 0014, г.Ереван, ул.Агароняна 2<br>ОАО «Арм Эконом Банк» |
| Հ/Հ 163004038879 | Р/С 163004038879 |
| ՀՎՀՀ 02500052 | ИНН 02500052 |
| Լիազորված անձ | Доверенное лицо |
| Կ.Տ. | М.П. |
| Գ.Զատիկյան | Затикян |

## 8. ЮРИДИЧЕСКИЕ АДРЕСА СТОРОН

| **«Բաժանորդ»** | **«Абонент»** |
|---|---|
| ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br>ՀՀ, Երևան, 0004<br>Կառավարական տ 3<br>ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011001287<br>Հ/Հ 900011001295<br>ՀՎՀՀ 02578338 | Министерство регионального управления и развития РА<br>РА, _Ереван, 0004<br>Дом Правительства 3<br>Операционное управление аппарата Министерства Финансов Республики Армения<br>Р/С 900011001287<br>Р/С 900011001295<br>ИНН 02578338 |
| Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար | ВриО Руководителя аппарата |
| Կ.Տ. | М.П. |
| Մ. Բաղդասարյան | М.Багдасарян |

**ՀԱՎԵԼՎԱԾ №1 / ПРИЛОЖЕНИЕ №1**

կից № 112753629 պայմանագրին / к договору №

| № | Ծառայության անվանումը / Наименование услуги | E1 կապուղու ուղղությունը (*Նշել Ա և Բ հասցեները, գոտու համարը) / Направление канала E1 (отметить адреса А и Б, номер зоны*) | Համակցման տեխ. տվյալները, սարքավորում, վիրտուալ համարները* / Тех. условия подклю-чения, оборудование, виртуальные номера | Քանակը / Количество | Տեղադրման վարձ (Միանվագ) Դրամ ԱԱՀ-ով / Плата установки (Единовременная) Драм с НДС | Ծառայության սակագինը Դրամ ԱԱՀ-ով / Тарифный план услуги Драм с НДС | Բաժանորդային վարձ Դրամ առանց ԱԱՀ / Абонентская плата Драм без НДС | ԱԱՀ / НДС | Ընդամենը Դրամ ԱԱՀ-ով / Всего Драм с НДС | Ծառայության տրամադրման ամսաթիվը / Дата предоставле-ния услуги |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2048 կբիթ/վրկ թողունակությամբ թվային (Հայաստանի Հանրապետության տարածքում) տվյալների փոխանցման կապուղի E1 առանց հանրային համակցման հեռախոսային ցանցին միանալու հնարավորության (տեղական, միջքաղաքային) | | | | | | | | | |
| 2 | Վերջնական օգտագործողի համար հանրային ամրակցված հառախոսային ցանցին միանալու հնարավորությամբ 2048 կբիթ/վրկ թողունակությամբ E1 կապուղի | TX/Կենտրոն – Երևան,Կառավարական տ.3 | | 1 | | 58333.33 | 58333.33 | 11666.67 | 70000 | |
| | | | 511300 - 511399 | 100 | | 500 | 50000 | 10000 | 60000 | |
| | Ընդամենը | | . | | | | 108333.33 | 21666.67 | 130 000 | |

| «Օպերատոր» | «Оператор» | «Բաժանորդ» | «Абонент» |
|---|---|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ЗАО «АрменТел» | ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | Министерство регионального управления и развития РА |
| 0014, ք. Երևան, Աhարոնյան 2<br>«Հայ Էկոնոմ Բանկ» ԲԲԸ | 0014, г.Ереван, ул.Агароняна 2<br>ОАО<br>«Арм Эконом Банк» | ՀՀ, Երևան, 0004<br>Կառավարական տ. 3<br>ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | РА, Ереван, 0004<br>Дом Правительства 3<br>Операционное управление аппарата Министерства Финансов Республики Армения |
| Հ/Հ 163004038879 | Р/С 163004038879 | Հ/Հ 900011001287<br>Հ/Հ 900011001295 | Р/С 900011001287<br>Р/С 900011001295 |
| ՀՎՀՀ 02500052 | ИНН 02500052 | ՀՎՀՀ 02578338 | ИНН 02578338 |
| Լիազորված անձ | Доверенное лицо | Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար | ВриО Руководителя аппарата |
| | | Ա.Տ. | М.П. |
| Գ.Զատիկյան | Г.Затикян | Մ.Բաղդասարյան | М.Багдасарян |

Հավելված 2
«--» «--» 2016 թ. կնքված թիվ 112753629 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ________________ | հհ________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ________________ | հվհհ________________ |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«      » «                    » 20      թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս___________________________________________, հիմք ընդունելով
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները, աշխատանքները կամ ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները

Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը փաստացի | կատարման ժամկետը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | կատարման ժամկետը փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների, աշխատանքների կամ ծառայությունների կատարման կամ մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |